«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор
«HAYANTAR»
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

№ 11-10/249
«30» «07» 2024թ.

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта:info@armforest.am
Հեռ.՝/tel:/тел: 010/65-37-16, 010/65-02-35

Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանին
(անձ. ՝AU0225776, տրված՝07.04.2021 թ, 056 կողմից)

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Հարգելի պարոն Ներսիսյան

«Հայանտառ» ՊՈԱԿ -ի և և Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանի (անձ.՝ AU0225776, տրված՝ 07.04.2021 թ, 056 կողմից միջև 2024թ հունիսի 17-ին կնքված «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ի «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի կարիքների համար աշխատակիցներին այլ աշխատանքային վայր տեղափոխելու ծառայությունների մատուցման պետական գնման N ՀԱ-ԳՀԾՁԲ-2024/16-2 Պայմանագրի, (այսուհետ՝ Պայմանագիր), ինչպես նաև 24.07.2024թ թիվ 1 Համաձայանագրի շրջանակներում Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանը, մինչև 2024 թ. նոյեմբերի 25-ը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ին պետք է մատուցի «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի կարիքների համար աշխատակիցներին այլ աշխատանքային վայր տեղափոխելու ծառայություններ:

24.07.2024թ. պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի զեկուցագրի համաձայն Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանը 2024թ հուլիսի 18-ից գտնվում է ՌԴ-ում և 18.07.2024թ-ից չի մատուցել վերոնշյալ ծառայությունը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը <<2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,
բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:>>, պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Ավետիք Ադամյանի 24.07.2024թ N06-123 զեկուցագիրը Հանձնաժողովը միակողմանի լուծում է 2024 Հունիսի 17-ին կնքված N ՀԱ-ԳՀԾՁԲ-2024/16-2 ծածկագրով պայմանագիրը և դրա մաս կազմող թիվ 1 Համաձայանգիրը:

Տեղեկացնում ենք, որ Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանը, պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետարան 900145001484 հաշվեհամարին վճարել 6910 (վեց հազար ինը հարյուր տասը) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագիր

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվը առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը, որը կազմում է 153,560 (մեկ հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը, որը կազմում է 230,340 (երկու հարյուր երեսուն հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ, վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 Հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ օգոստոսի 5-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 153,560 (մեկ հայուր հիսուներեք հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 230,340 (երկու հարյուր երեսուն հազար երեք հարյուր քառասուն) որակավորման ապահովման գումարները, ապա Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հրավեր 8.13 կետի 2-րդ պարբերություն /սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին/):

Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. օգոստոսի 6-ը ներառյալ ներկայացնել <<ՀԱՅԱՆՏԱՌ>> ՊՈԱԿ-ի գնումների բաժին :

Հարգանքով՝

Սևակ Մարկոսյան

Կատարող՝ ՄԱՆԵ ԽԱՉԱՏՐԱՅԱՆ
094-64-20-33